<<Արժանապատիվ սպա>> իրավա-սոցիալական հասարակական կազմակերպության
դիտորդի վարքագծի կանոններ

Հանդիսանալով __<<Արժանապատիվ սպա>> իրավա-սոցիալական հասարակական կազմակերպության դիտորդ՝ պարտավորվում եմ

-Պահպանել սույն վարքագծի կանոնները

- Ներկայանալ ընտրական հանձնաժողովների նախագահներին, գրանցվել և տեսանելիորեն կրել դիտորդի վկայականը

- Հարգել ՀՀ գործող օրենսդրությունը

- Լինել անկուսակցական

-Չլինել կողմնակալ և դիտորդություն իրականացնելիս չառաջնորդվել քաղաքական հայացքներով-

Հագուստի կամ ունեցած պարագաների վրա որևէ քաղաքական ուժի խորհրդանիշ չկրել

- Լինել հարգալից ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների հանդեպ

- Չհայտնել անձնական տվյալներ

- Դիտարկման ընթացքում վիճաբանության մեջ չմտնել և ցուցումներ չտալ ընտրական գործընթացի որևէ մասնակցի

- Չխանգարել նախընտրական գործընթացներին և չխոչընդոտել ընտրական որևէ փուլի աշխատանքներին:

- Ընտրական հանձնաժողովի անդամներից, վստահված անձանցից և ընտրողներից չընդունել որևէ բան, ինչը կարող է ազդել դիտարկողի անկախության և ազատության վրա կամ մեկնաբանվել որպես այդպիսին

- Առանց համակարգողին տեղեկացնելու չլքել դիտարկման հանձնարարված տարածքը

- Դիտարկումն իրականացնել թափանցիկ կերպով

- Արձանագրված խախտումների վերաբերյալ ստացված տվյալները չփոխանցել երրորդ անձանց- Հարցազրույցներ տալ միայն համակարգողի թույլտվությամբ

- Չօգնել որևէ ընտրողի, բացառությամբ կյանքի կամ առողջության համար անհետաձգելի օգնություն ցուցաբերելու հնարավոր դեպքից

- Համագործակցել Առաքելության գործընկեր դիտորդի և շրջիկ դիտորդների հետ

- Անհրաժեշտության և փոխադարձ համաձայնության դեպքում համագործակցել այլ, բայց անկողմնակալ դիտորդների հետ

- Ոստիկանության ծառայողներին դիմել միայն տեղամասային կենտրոնից դուրս եղած խախտումների առնչությամբ կամ եթե կա դիտորդի անձին կամ գույքին իրական սպառնալիք

- Աջակցության կամ խորհրդատվության համար դիմել առաքելության իրավաբանին- Հասկանալ, որ այս վարքականոնի որևէ գիտակցված խախտում վարկաբեկում է ոչ միայն իրեն, այլև ընտրությունների դիտարկման առաքելությունն ամբողջությամբ: